ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ-
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ **Գ. Անանյան**

- **Երկիր/քաղաք/ժամկետ**

Ուկրաինա (Կիև) 23.10 - 25.10.2018թ.

- **Նպատակը**

Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության մոդերնիզացում» խորագրով կազմակերպված Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների համար բարձր մակարդակի սեմինար

- **Քննարկված թեմաները**

2018թ. հոկտեմբերի 23-ին՝

- **Ողջույնի խոսքեր և նստաշրջանի բացում Ուկրաինայի պետական վիճակագրական ծառայության, ԵՄ պատվիրակության և Եվրոստատի կողմից**
- **Սեմինարի ներկայացում Եվրոստատի կողմից**

- **Նստաշրջան 1-ին**
- **Թեմա՝ Եվրոպական Վիճակագրական Համակարգում և Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում վերջին զարգացումները**

Սույն նստաշրջանում ներկայացվեցին վերջին զարգացումները Եվրոպական Վիճակագրական Համակարգում՝ կենտրոնանալով նախորդ տարվա ընթացքում Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում տեղի ունեցած միջոցառումների վրա: Թեմաները ներառեցին ԵՀՔ-ի իրականացումը, վերջին շրջանում իրականացված գլոբալ գնահատումները և այլ ակնարկներ, Եվրոստատի վերակազմակերպումը և ընթացիկ ծրագրերը և տարածաշրջանին վերաբերող ծրագրերը:

Նստաշրջանի ընթացքում բոլոր մասնակից երկրները հակիրճ տեղեկացրեցին իրենց ազգային վիճակագրական համակարգերում ամենակարևոր վերջին զարգացումների մասին (ազգային օրենքի փոփոխություն / իրականացման մարտահրավերները, կառուցվածքային փոփոխություն, կազմակերպության կառավարորում, նոր հետազոտություններ և մեթոդաբանություններ, որակի հիմնահարցեր, տվյալների արտադրություն և այլն):

- Նստաշրջան 2-րդ
- Վիճակագրական արտադրության գործընթացների մոդերնիզացում և տվյալների այլընտրանքային աղբյուրների օգտագործում

Սույն նստաշրջանը ընդգրկեց վիճակագրական արտադրության և ծառայության համար GAMSO, GSBPM, GSIM, CSPA ստանդարտացված մոդելների արդյունավետ օգտագործմանն առնչվող և պաշտոնական վիճակագրության կազմման նպատակով վարչական տվյալների օգտագործման և տվյալների ոչ ավանդական աղբյուրների օգտագործմանն առնչվող հիմնահարցեր:
Նստաշրջանի ընթացքում ներկայացվեցին շնորհանդեսներ և տեղի ունեցան քննարկումներ հետևյալ թեմաներով.

- Ստանդարտացված մոդելների արդյունավետ օգտագործումը (GAMSO, GSBPM,GSIM,CSPA) վիճակագրական արտադրության և ծառայությունների մոդերնիզացման համար/UNECE/,
- Արդյունավետ որակի կառավարման համակարգի մշակում ISO 9001-2015 ստանդարտի պահանջներին համապատասխան /Բելառուս/,
- Վարչական տվյալների օգտագործումը պաշտոնական վիճակագրությունը կազմելու նպատակով /Սլովենիա/,
- Վարչական տվյալների օգտագործումը Վրաստանում պաշտոնական վիճակագրության արտադրության համար /Վրաստան/,

Հայաստանը սույն նստաշրջանի շրջանակում ներկայացրեց "GSBPM-ի իրականացումը Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեում" խորագրով շնորհանդես:

2018թ. հոկտեմբերի 24-ին՝

- Նստաշրջան 3-րդ
- Թեմա՝ Ռազմավարական գործընկերություններ պաշտոնական վիճակագրության մեջ

Սույն նստաշրջանը ներկայացրեց ազգային վիճակագրական համակարգում արդյունավետ փոխգործակցության և համակարգման մոդելների, վիճակագրական տվյալների տարածման համար նորարարությունների և այլընտրանքային տվյալներ արտադրող նոր գործընկերների որոնման հարցերը:
Նստաշրջանի ընթացքում ներկայացվեցին շնորհանդեսներ և տեղի ունեցան քննարկումներ հետևյալ թեմաներով.

- Ամբողջ պաշտոնական վիճակագրությունը ընդհանուր հասանելիության կետից/Լիտվա/,
- Այլընտրանքային աղբյուրներից տվյալներ արտադրող նոր գործընկերների որոնում/Լեհաստան/,
- Գործընկերության կառուցում. Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի փորձը

- Նստաշրջան 4-րդ

- Թեմա՝ Ինովացիաներ վիճակագրական արտադրանքի որոշակի ասպեկտների համար

Սույն նստաշրջանը ընդգրկեց ինովացիաների վիճակագրությունը. Հաշվառման դժվարությունները և զարգացման հեռանկարները, հաշվառումների իրականացման համար նորարարությունները և փորձնական հաշվառումների անցկացման փորձը Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրներում, ոչ ֆորմալ զբաղվածության վիճակագրական գնահատականները և տեղեկատվական աջակցությունը ԿՀՆ-ին հասնելու համար:

Նստաշրջանի ընթացքում ներկայացվեցին շնորհանդեսներ և տեղի ունեցան քննարկումներ հետևյալ թեմաներով.

- Նախապատրաստական աշխատանքներ 2020թ. Ուկրաինայի մարդահամարի կազմակերպման համար,
- Ինովացիայի վիճակագրություն. Հաշվառման դժվարությունները և զարգացման հեռանկարները /Իսլանդիա/,
- Բաց աղբյուրի "R" ծրագիր /Լատվիա/,
- Վիճակագրական տվյալների տարածում /Մոլդովա/,
- Կարճաժամկետ վիճակագրության համակարգի հեռանկարային բաղադրիչը - ձեռնարկությունների գործունեության հետազոտություններ /Ուկրաինա/

- Նստաշրջան 5-րդ

  - Թեմա՝ Լավագույն փորձերը վիճակագրության մեջ

Սույն նստաշրջանը ներառեց փորձի փոխանակումը մասնակիցների միջև վիճակագրական գործունեությանն առնչվող լավագույն փորձառությունների վերաբերյալ (օրինակ ՝հետազոտություններ, մեթոդաբանություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և տարածում, անձնակազմի ուսուցում, սպառողների և այլ տվյալներ արտադրողների հետ շփում, տվյալների արտադրության որակ, Կայուն զարգացման նպատակներ և այլն):

2018թ. հոկտեմբերի 25-ին՝

- Նստաշրջան 6-րդ
- Թեմա ՝ Համագործակցության հարցեր

Սույն նստաշրջանը ընդգրկեց վիճակագրական համագործակցությունը Եվրոստատի և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների միջև, ներառյալ, գլոբալ գնահատումների առաջարկությունների իրականացման հետևողականությունը, ասոցացման համաձայնագրերի իրականացումը, Ընդհանուր Վիճակագրական օրենքը, դոնորների համակարգումը, Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների համար պլանավորված ուսումնական դասընթացները, Արևելյան գործընկերության 2020թ. արդյունքները, վիճակագրության պանելի

հանդիպումները, TAIEX- ի օգտագործումը, ինչպես նաև ԵՀՔ-Արևելյան երկրների նոր տարածաշրջանային ծրագրի մեկնարկը:

Նստաշրջանի ընթացքում ներկայացվեցին շնորհանդեսներ և տեղի ունեցան քննարկումներ հետևյալ թեմաներով.

- Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների տարածաշրջանում ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /UNECE/ կարողությունների զարգացման գործունեությունները,
- Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի /EFTA/ վիճակագրական գրասենյակի տեխնիկական համագործակցության գործունեությունը,
- Վիճակագրական համագործակցության գործունեությունների ակնարկ /Եվրոստատ/ ,
- ԵՀՔ-Արեւելյան տարածաշրջանային վիճակագրական ծրագիր - բովանդակություն, ժամկետ, գործունեություններ, երկրների կարիքներ /Եվրոստատ/,
- Թեկնածու երկրներին ուղղված IPA ծրագրի լավագույն փորձերի հիման վրա վիճակագրական տարածաշրջանային ծրագրերի իրականացման գործնական ասպեկտները /Եվրոստատ/:

- Եզրակացություններ
- Այլ հարցեր և սեմինարի ավարտ
- 2019թ. բարձր մակարդակի սեմինարի թեմաները, ամսաթվերը , վայրը:

Արդյունքները

Մասնակցությունը սեմինարին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական հաստատությունների ներկայացուցիչներին ծանոթանալու Եվրոպական Վիճակագրական Համակարգում պաշտոնական վիճակագրության մոդերնիզացման, օրենսդրության և որակի հետ կապված վերջին զարգացումներին, ինչպես նաև վիճակագրական գործունեությանն առնչվող լավագույն փորձառություններին՝ վիճակագրական գործընթացներն առավել արդյունավետ կազմակերպման նպատակով: Սեմինարը լավ հնարավորություն էր մասնակիցների համար կիսելու իրենց խնդիրները և փորձերը, ինչպես նաև գտնելու նոր լուծումներ և քննարկելու հետագա գործողությունները վիճակագրական արտադրության գործընթացների մոդերնիզացման և տվյալների այլընտրանքային աղբյուրների օգտագործման, պաշտոնական վիճակագրությունում ռազմավարական գործընկերությունների, պաշտոնական վիճակագրության արտադրության որակի բարելավման և ազգային վիճակագրական համակարգի հետագա կատարելագործման վերաբերյալ:

➢ Նշումներ

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Եվրոստատի կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ-
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Անանյան